

Կենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման 4 հիմնական միջոցառում.

- Բնակության հատուկ միջավայրի պաշտպանություն, ազգային պարկերի, կենսոլորտային արգելոցների և այլ պահպանվող տարածքների ստեղծում
- Առանձին տեսակների կամ խմբերի պաշտպանություն
- Որպես զենոֆոնդ, տեսակների պահպանում բուսաբանական այգիներում կամ զենային բանկերում
- Շրջակա միջավայրի աղտոտման կրճատում

Այս միջոցառումները իրականացվում են ազգային և միջազգային ծրագրերի, համաձայնագրերի շրջանակներում, և արդյունքների մասին պարբերաբար զեկույցներ են ներկայացվում համաշխարհային կոնֆերանսներում: Սակայն, գործադրվող միջոցները և միջոցառումները դեռևս մնում են անբավարար, իսկ կենսաբազմազանության անդարձ կորուստը երկրագնդի մասշտաբներով շարունակվում է:



Տեսակների բազմազանությունը



Սույն հրատարակությունը իրագործվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ կողմից Նորվեգիայի Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) ֆինանսական աջակցությամբ:



ՀՀ, Երևան, 0019
Բաղրամյան պող., 24դ, 609 սենյակ
հեռ. / ֆաքս. (+37410) 523604
Էլ. փոստ: office@awhhe.am

Երևան 2008



Wood pigeon



Clematis



Kowhai

Tui



Northern rata

Երկրի վրա բնակվող կենդանի օրգանիզմների տեսակների թիվը տատանվում է 5-8 մլն-ի սահմաններում, սակայն հաստատված է 1.4 մլն-ի տեսակային պատկանելիությունը: Դրանցից մոտ 750 000-ը միջատներ են, 41 000 - ը՝ողնաշարավոր կենդանիներ, 250 000-ը՝ բույսեր:

Ինչ է տեսակների բազմազանությունը

«Կենսաբազմազանություն» տերմինը ասոցացվում է հիմնականում կենդանի օրգանիզմների բազմազանության հետ:

Ներկայումս կենսաբազմազանություն ասելով հասկանում են բոլոր տեսակի բույսերը, կենդանիները, սնկերի, քարաքոսերի, մանրէների տարբեր տեսակների ամբողջությունը, ինչպես նաև էկոհամակարգերը և էկոլոգիական գործընթացները, որոնց մաս են կազմում այդ օրգանիզմները:

Կենսաբազմազանությունը, որը կարևորագույն կենսական ռեսուրսներից մեկն է, համարվում է կյանքի հիմքը Երկրի վրա:

Կենսաբազմազանությունը Երկրի վրա ապրող օրգանիզմների զեներում պարունակվող տեղեկատվության /գենոֆոնդի/ պահպանման կարևորագույն միջոցն է: Կենսաբազմազանությունը բիոցենոզի կայունությունը նախադրյալ գլխավոր գործոններից մեկն է:

Կենսաբազմազանությամբ է պայմանավորված մարդու սննդատեսակների առատությունը, ըստ որում, որոշ տեսակներ ուղղակի անփոխարինելի են: Այսպես, մարդն իր սննդում օգտագործում է 7000 տեսակ բույս: Սակայն, Համաշխարհային պարենի 90 %-ը ստեղծվում է 20 տեսակի

հաշվին, իսկ դրանցից 3 տեսակը /ցորեն, եգիպտացորեն, բրինձ/ բավարարում են բոլոր պահանջների կեսից ավելին: Կենսաբանական ռեսուրսներն արդյունաբերության, այդ թվում նաև բժշկական արդյունաբերության հունքի զգալի աղբյուրն են: Կենսաբազմազանությունն ունի մեծ գեղագիտական նշանակություն, և շատ կարևոր է այն պահպանել և փոխանցել սերունդներին:

Առանձնացվում է տեսակների կորստի չորս հիմնական պատճառ, որոնք բոլորն էլ ունեն անթրոպոգեն բնույթ՝

- բնական միջավայրի կորուստ, կտրտվածություն և փոփոխություն,
- ռեսուրսների անչափ շահագործում /որս, ոչնչացում/,
- շրջակա միջավայրի աղտոտում,
- բնական տեսակների դուրս մղումը արհեստական սելեկցիոն ճանապարհով ստացված տեսակներով:

Մասնագետների հաշվարկներով, երկրի վրա տարեկան ոչնչանում է 11.1 մլն հա արևադարձային անտառ, որի պատճառով ոչնչանում են ոչ միայն այնտեղ բնակվող տեսակները, այլև հարակից տարածքներում ապրողները:

Տեսակային բազմազանության կորուստը, որպես կենսական ռեսուրս, կարող է հանգեցնել մարդու բարեկեցության և առաջին հերթին՝ էկոհամակարգերի կայունության նվազման: Ելնելով վերոհիշյալից, 1992 թ. Ռիո-դե-ժանեյրոյում գումարված շրջակա միջավայրի պահպանությանը և զարգացմանը նվիրված համաշխարհային կոնֆերանսում, որին մասնակցում էին 178 պետությունների, այդ թվում նաև Հայաստանի կառավարության ղեկավարները, ընդունվեց համաձայնագիր, որը նախատեսում էր



Kingfisher

Mistletoe



Bush Lily



Tree daisy



Bellbird